# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

«25» դեկտեմբերի 2023 թվականի N 148 -Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման նպատակով դիմումների քննարկման հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 14-Ա որոշմանը համապատասխան,հիմք ընդունելով համայնքի բնակիչների դիմումները, ինչպես նաև համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննող հանձանժողովի եզրակացությունը՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ (7) | Դեմ (0) | Ձեռնպահ (1) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | [signature] | — | — | — |
| Օհանյան Ռուսլան | [signature] | — | — | — |
| Սարգսյան Արիդ | [signature] | — | — | — |
| Նալբանդյան Նարեկ | — | — | [signature] | — |
| Մուրադյան Դավիթ | [signature] | — | — | — |
| Պառավյան Գոհար | [signature] | — | — | — |
| Այվազյան Սերյոժա | [signature] | — | — | — |
| Գրիգորյան Արսեն | [signature] | — | — | — |
| Այվազյան Վրույր | — | — | — | բացակա |
| Գևորգյան Համլետ | — | — | — | բացակա |
| Քալաշյան Վարսենիկ | — | — | — | բացակա |
| Թերոսյան Հրայր | — | — | — | բացակա |
| Տոնոյան Արտյոմ | — | — | — | բացակա |
| Գրիգորյան Թամարա | — | — | — | բացակա |
| Սարգսյան Ալիկ | — | — | — | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ [signature] /ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ/